Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

2023 թ. պատադիր ատեսատավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Հետազոտական աշխատանք հայոց լեզվից և գրականությունից

Թեմա՝ Տերյանի և Չարենցի խորհրդապաշտության աղերսները

Կատարող՝Թ.Մելքոնյան

Ղեկավար՝ բ.գ.դ. պրոֆ. Ա.Գալստյան

# Ներածություն

Հայ գրականության երկու հսկա բյուրեղների՝ Վահան Տերյանի և Եղիշե Չարենցի տաղանդի բռնկումները ակամա մղում են հանգելու նոր բացահայտումների և նոր հետևությունների:Եզակի այս բանաստեղծները թեև աշխարհայացքի ձևավորմամբ և ճակատագրով տարբեր անհատականություններ են,սակայն դա չի խանգարել, որ իրենց ստեղծագործական ուղին սկսեն սիմվոլիզմի գեղագիտական սկզբունքներով,թեև Տերյանը համարվում է հայ նոր գրականության մայրամուտը,իսկ Չարենցը նորագույն շրջանի լուսաբացը:

Սիմվոլիզմը Տերյանին տանում է դեպի «Մթնշաղի անուրջներ»,իսկ Չարենցին՝ մահվան հովիտ՝«Երեք երգ տխրադալուկ աղջկան», որը վերաճում է տիեզերական լաբիրինթոսում թափառող, հոգում երեք գույնով ծիածանված քնարական հերոսի «Ծիածան» ժողովածուում:Այս երկու բանաստեղծներին խորապես հասկանալու համար նախ պետք է գտնել այն բանալին,որով կարելի է բացել նրանց հոգու գաղտնարանները, բացահայտելու նրանց խորհածը,ապրածը և վերապրածը:Նրանց ստեղծագործական ուղիների սկիզբի բացահայտումը հնարավորություն կընձեռի հասկանալու այս երկու հանճարների ստեղծագործական հետագա ընթացքը,մղելու ճշմարիտ վերլուծական մտածողության:

Չարենցի և Տերյանի խորհրդապաշտության ուսումնասիրությունը նախընտրելի է ավագ դպրոցում՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով:Անհատի և հասարակության փոխհարաբերությունը խիստ

կարևորվում է այդ շրջանում։Մարդը՝որպես գոյության բարձրագույն ձև,նյութականի և հոգևորի մի ամբողջություն է։Մեկի նսեմացումը և մյուսի վսեմացումը կտանի կյանքի խեղաթյուրման. սա բնորոշ է անցումային տարիքին։Ահա այստեղ է կարևորվում մեկը մյուսով հավասարակշռումը,ձևավորվող անհատի կողմից հասարակական խնդիրների ճիշտ ընկալումը,հասարակության լիարժեք անդամի ձևավորումը։Երկու հանճարների սիմվոլիզի ուսումնասիրմամբ սովորողը կմղվի համեմատությամբ, հակադրմամբ և համադրմամբ վերլուծական մտածողության, որը թույլ կտա ընկալել և անհատական մոտեցում ունենալ ոչ միայն ստեղծագործություններին,այլև ցանկացած վիճահարույց խնդրի,այսինքն՝կնպաստի անհատի ձևավորմանը։Այդ նպատակով կատարվել է մի շարք աշխատանքների հետազոտություն.

1.Գասպարյան Դ.«Ողբերգական Չարենցը»

2.«Հայ գրականություն»

3.Թամրազյան Հր.«Բանաստեղծության հազարամյա խորհուրդը»

4.Ղարիբյան Մ.«Եղիշե Չարենց»

5.Զրբաշյան Է.«վահան Տերյանի պոեզիան»

Խորհրդապաշտությունը Տերյանի ստեղծագործություններում

Սիմվոլիստների գաղափարախոսության հիմքում ինքնամեկուսացումն է հասարակությունից,մարդատյացությունը՝ վեր դասելով իրենց ես-ը։Սիմվոլիստների ստեղծագործություններին բնորոշ էին կենսական պայքարից հեռանալու և սեփական հոգու փղոսրկրյա աշտարակում պատսպարվելու ծայրահեղ եսասիրության և անզորության տրամադրությունները[1]։Ի հակադրություն եվրոպական սիմվոլիստների մարդատյացության՝ Տերյանի սիմվոլիզմը ծնվել է մարդու նկատմամբ մեծ սիրուց։Տերյանը իր նամակներց մեկում գրում է.«Բայց ես քանի գնում,այնքան ավելի եմ համոզվում,որ միայն սիրով կարելի է անել ամեն ինչ,առանց սիրո՝ոչինչ։Մինչդեռ մարդիկ,բոլոր մարդիկ մենակ են»։Յուրաքանչյուր մարդ այս աշխարհում դժբախտ է յուրովի և միայնակ՝իր դժբախտության հետ։Մարդու նկատմամբ մեծ սիրուց ծնված մեծ ցավը բանաստեղծին հասցնում է անսահման հուսահատության,և նա փակվում է անուրջների աշխարհում։Այստեղ կարելի հիշել Մ.Մեծարենցին,որը այսպիսի իրադրության հակադիր բևեռում էր։Երբ Մեծարենցը զգաց մոտալուտ մահը,նրա՝ կյանքից հեռանալու մեծ ցավը վերաճեց մեծագույն մարդասիրության,և նա կյանքի վերջում գրեց «Ըլլայի՞,ըլլայի՞» շարքը։

Տերյանը իր կառուցած աշխարհը կոչում է «Մթնշաղի անուրջներ»։Նա մեկուսանում է մարդկանցից,քանի որ ծանր է տանում մարդու բարոյական անկումը,սուտը,կեղծիքը,անտարբերությունը,մարդու նմատմամբ սիրո

1.Է.Ջրբաշյան,Հ.Մախչանյան.«Գրականագիտական բառարան»,1980,էջ 274

բացակայությունը։«Մթնշաղի անուրջները» բացվում է «Տխրություն» բանաստեղծությամբ։Այստեղ հերոսի երևակայական դղյակը բնորոշվում է

վերացական խորհրդանիշներով՝ «քնքուշ մութի թև,անուրջ կույս,ուրու»։Սակայն երազային աշխարհը դառնում է առարկայական ,իսկ տխրությունը՝շոշափելի։Բանաստեղծությունը ունի ներքին դինամիկա.սկզբում տխրությունը ստվեր է,որը վերածվում է ուրուի,ապա մարմնավորվում է ճերմակ շորերով գունատ աղջկա պատկերով։Տերյանի տխրությունը ճերմակ է,հուսալքված հոգին ամայացած դաշտերն են,որոնք լցվում են անուրջ կույսի մեղմահոս զգացմունքով,հուսահությամբ և տխրությամբ։Այստեղ սովորողի մտածողության մեջ պետք է մշակել վերացականից առարկայական և առարկայականից վերացական անցում կատարելու կարողունակություն։

Ծաղիկների մեջ  այդ անուրջ կույսի շշուկը մնաց,

Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին։

Վ.Տերյանը այս շարքում ստեղծեց պատկերային ուրույն համակարգ,որոնց խորհրդանիշների սուբյեկտիվ ընկալումները թույլ են տալիս կատարելու յուրովի մեկնաբանություններ։«Աշնան երգ» բանաստեղծության մեջ տերևները զգացմունքների և խոհերի խորհրդանիշներն են։Նրանք ցրտահար են և հողմավար,քանի որ հերոսը կրում է իրական կյանքի տառապանքները.

Ցրտահա՜ր,հողմավա՜ր,

Դողացին մեղմաբար

Տերևները դեղին

Պատեցին իմ ուղին։

Քնարական հերոսը,որը հիմնականում ձուլվում է բանաստեղծի անհատականությանը,երկատվում է.նրա մարմինը երկրային ձգողության մեջ է,հոգին՝երկնային թռիչքների,որոնց հանգրվանը այդ անվանակիր ու անանուն հեռավոր երկրներն են[2]։

«Աշնան մեղեդի» բանաստեղծության մեջ բացահայտվում է հերոսի հոգու երկփեղկվածությունը՝անցյալի և ներկայի ես-երի միջև երկխոսությունը։Փղոսկրե դղյակում,թվում է, խաղաղ ու հանգիստ է ներկայի ես-ը,բայց նա ապրում է անցյալի հուշերով,կարոտում աղմկահեր կյանքով ապրող ես-ին,ձգտում վերապրել անցած հույզերն ու լույսերը.

Դու կյանք ես տեսել,դու կյանքն ես հիշում

Ոսկե տեսիլներ,անուրջների լու՜յս…

Ես՝ցուրտ մշուշում։

Այստեղ սովորողը պետք է ուսումնասիրի և հասկանա հոգու դրսևորումները՝ ինքնաճանաչման և միջավայրի հետ շփման եզրեր գտնելու համար։

2.Դ.Գասպարյան.«Հայ գրականություն,Ցնորական Վ.Տերյանը-գիրք 6-րդ»,Երևան,2017թ.,էջ91

«Աշուն» բանաստեղծության մեջ,որքան էլ հերոսին գայթակղիչ է անդրաշխարհի լռությունը,միևնույնն է, նա վերադարձի հույս է փայփայում,որը բխում է անցյալի և երկրայինի նկատմամբ մեծ կարոտից.

Միգում շողաց մի ցուրտ լույս.

—Օ՜,արդյոք կա վերադարձ.

Մահացողի անզոր հույս,

Վհատ սրտի տխուր հարց…

«Էստոնական երգ» բանաստեղծության մեջ ի հայտ է գալիս մի նոր կերպար՝կնոջ կերպարը, որը նույն ճակատագրին է արժանացել. բյուր մարդոց մեջ նույնպես միայնակ է։ Հերոսը պատրաստ է ընդունելու և պաշտպանելու նրան՝հուսալով փրկվել միայնությունից։ Ըստ իս՝ Տերյանի կերտած կնոջ կերպարը խորհրդանիշ է՝ բանալի՝ դեպի իրական աշխարհ վերադարձի ճանապարհը գտնելու համար։Հեղինակը ընտրել է կնոջ կերպարը,քանի որ նա կյանքի գնով կյանք պարգևող է. այստեղ արժևորվում է կնոջ դերն ու նշանակությունը հասարակության մեջ։ Հոգնելով մենակությունից՝ նա կնոջ միջոցով փորձում է կապ ստեղծել իրականության հետ։

Հերոսի ես-ը մերթ դեգերում է հեռավոր եզերքում, մերթ շփման եզրեր փնտրում սիրած կնոջ հետ,մերթ մերձենում հանդերձյալ աշխարհին,մերթ բացատրություն փնտրում «Fatum» բանաստեղծության մեջ։Այստեղ

բանաստեղծը ստեղծում է անձնավորված պատկերներ.աստղերը երազող սիրավառ հոգիներն են,որոնք որքան էլ ձգտում են ճանաչել միմյանց,այնքան ի հայտ են գալիս նորանոր առեղծվածներ։

Սիմվոլիստների բանաստեղծական մոդելներով հափշտակված Վ.Տերյանը,ինչպես իրեն ամենից հարազատ սիմվոլիստը՝Ալեքսանդր Բլոկը,ոչ միայն չի մեկուսանում «Փղոսկրյա աշտարակում»,այլև խորհրդանշանները նյութականացնում է իրական կյանքի գունագծերով[3]։

Այս դեգերումների ու որոնումների մեջ հերոսը գտնում է հետդարձի ուղին «Գարնանամուտ» բանաստեղծությամբ,որով եզրափակվում է «Մթնշաղի անուրջներ» շարքը։Հերոսը մենության խավար զնդանից վերադառնում է իրական աշխարհ՝մերժելով և՛ սուտ,և՛ կեղծիք,և՛ քամահրանք՝ նեցուկ ունենալով  կնոջ և կյանքի նկատմամբ մեծագույն սերը. կինը նրան կյանքին կապող լուսեղեն օղակն է.

Եվ ահա կրկին զվարթ ու ջահել,
Դուրս ելա տխուր մենության բանտից,
Պայծառ աչքերդ ողջունում են ինձ,
Եվ ես չեմ կարող իմ ճիչը զսպել։

Մեծ սերը մարդու նկատմամբ Տերյանին վերադարձնում է իրականություն՝ իրականության մեջ փնտրելով այն վեհն ու բարին,որ

3.Ս.Աղաբաբյան.«Դասականներ և ժամանակակիցներ»,Երևան,1988թ.,էջ151

թաքնված է մարդու հոգու խոր անկյուններում։Տերյանը,հետագայում այդ բոլորը բացահայտելով,անցում է կատարում դեպի մարդուն մարդ դարձնելու ճանապարհ։

Խորհրդապաշտությունը Չարենցի ստեղծագործություններում

Նորագույն շրջանի փաստական առաջնորդը դարձավ Ե.Չարենցը։Նա,ով դուրս էր եկել Տերյանի գրկից ու նաև Տերյանով ընկալած խորհրդապաշտության գեղագիտությամբ հրատարակել իր «Երեք երգ տխրադալուկ աղջկան»(1914թ.) և «Ծիածան» (1917թ.) ժողովածուները[4]։

Չարենցի ստեղծագործությունները ընկալելու համար սովորողը պետք է խոր պատկերացում ունենա այդ ժամանակի իրադարձությունների մասին, որոնք լի էին փորձություններով և պատմական խոր անկումներով։Չարենցը սերտորեն կապված էր այդ ամենին և ժողովրդի հոգևոր արժեքների կրողն է։Նրա ստեղծագործություններում համազգային արժեքները վերաճում են համամարդկայինի։ Սակայն նրա ստեղծագործական ուղին, որի նպատակն է ճշմարտության հայտնաբերումը, որը լի է հակասություններով,աչքի է ընկնում գաղափարափիլիսոփայական հետևյալ անցումներով խորհրդապաշտություն, ապագայապաշտություն,իրապաշտություն,որը հանգեցնում է պատմական ճշմատության։

Վաղ շրջանի Չարենցին ճանաչելու համար անհրաժեշտ է ներկայացնել այն ազդակները, որոնք նրան մղեցին դեպի խորհրդապաշտության ուղին։Պատանի Չարենցը ապրում է Կարսի գորշ միջավայրում։Գրքերի

4.Դ.Գասպարյան.«Հայ գրականություն,Ցնորական Տերյանը-գիրք 6-րդ»,Երևան,2017թ.,էջ91

միջավայրը ձևավորում է հերոսի աշխարհաճանաչողությունը։Գորշ միջավայրից հոգևոր ազատագրումը նրան նետում է խորհրդապաշտության գիրկը՝անմար պահելով ջերմ սերը երկրայինի և մարդու հանդեպ։

Գորշ միջավայրից առանձնանալու և իր ես-ը ճանաչելու և հասկանալու խնդիրը նրան մղում է մեկուսացման,և նա կառուցում է հոգու ամրոցը՝Երազների հովիտը։«Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին» նրա առաջին բանաստեղծությունը մուտք էր խորհրդապաշտների աշխարհ։Բանաստեղծը իրականից երազային աշխարհ անցնելու համար ընտրում է իրիկնաժամը,երբ իրականի և երազային սահմանը չի զատվում,երբ անցումը սահուն է կատարվում։Չարենցը,ինչպես Տերյանը,այստեղ աղերսվում է Մեծարենցին,որին գրականության մեջ անվանել են գիշերերգ։

Բանաստեղծն այստեղ իր տենչանքների խորհրդանիշներն է համարում ծաղիկները,իսկ քամին՝անմխիթար հույսը,որը տխուր երգ է հիշեցնում։

Իրական աշխարհի և բանաստեղծի՝ խոր հուզականությամբ լեցուն հոգու անհաշտությունը խորհրդանիշների պատկերային համակարգով դրսևորվում է «Երեք երգ տխրադալուկ աղջկան» բանաստեղծական շարքում։Իրականության նկատմամբ նրա ըմբոստացումը հագեցած է խոր դրամատիզմով «Ճամփին» բանաստեղծության մեջ։Կառապանը խորհրդանշում է ճակատագիրը,որը ցեխապատ ճանապարհով

ճղճիմ,հոգևոր արժեքներից զուրկ կյանքի ճանապարհով,շարժվում է առաջ,իսկ թոքախտավոր կինը խորհրդանշում է կյանքը,տանում է դեպի անորոշություն։

Գնում ենք։Ո՞ւր-չգիտեմ։Վերջ չկար։

Գնում ենք։Անխոս։Անձայն։Ու անքուն…

Սրան հաջորդում է «Անքուն գիշերին» բանաստեղծությունը։Անցյալի ու ներկայի միջև թափառումներից հոգնած,փորձելով դուրս պրծնել կյանքի տաղտուկից՝նրա հոգին անդորր է տենչում,և նա հայտնվում է Մահվան հովիտում։Հերոսի դրամատիզմը հասնում է գագաթնակետին,երբ անցյալում թողած նրա սերը՝որպես դառը ճշմարտություն,կործանված է այլևս։Նա կյանքի և սիրո միջև հավասարության նշան էր դրել։Եթե անցյալում թողած սերը նրա համար կործանված է,ապա մերժված է իրական կյանքը։Իրական կյանքի մերժումը նրան հասցնում է  Մահվան հովիտ։

Ու… այս եմ հիշում՝

Մի հին անկողին-թաղված մշուշում,

Ու մի մերկ մարմին…

Զգացի միայն,որ ցուրտ է,քամի,-

Որ կյանքն ինձ համար էլ կատակ է մի։

«Մեռելոց»-ում հերոսը հայտնվում է Մահվան հովիտում,որտեղ մռայլ խորհրդանիշներով՝անձևոտ երեկո,տաղտուկ քամի,մթին գիշեր,գծագրվում

է անհուսությունը ու անորոշությունը։Սակայն մի մեծ նպատակ նրան վերադարձնում է կյանք.նա ուզում է աղոթքով ու օրհնությամբ երկրային մեղքերից մաքրագործել մարդուն,ծանր բեռից ազատել նրան։Մարդուն

աղոթքով և օրհնությամբ մաքրագործելու գաղափարը գալիս է միջնադարից՝Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից։Այստեղ Նարեկացու նման նա մի ծանր բեռ է վերցնում ուսերին։Այս նպատակը նրան բերում է սիրո հովիտ՝ դեպի «Ծիածան», որի երեք գույները առանձին խորհրդանիշներ են։Ծիածանը մեծ խորհուրդ ունի.այն կապ է ստեղծում

երկնայինի և երկրայինի միջև։Այն թույլ է տալիս թռիչքային անցում կատարել երկրայինից հիասթափված,երկնային ուղիներ ձգտող բանաստեղծին։ Այս անցումը կատարվում է երեք փուլով,որոնք խորհրդանշվում են երեք գույներով՝ կապույտը,ոսկին,մանուշակագույնը։ Չարենցի վերադարձը դեպի իրականություն անցնում է սիրո ճանապարհով։

«Ծիածան» ենթաշարքը բացում է «Լուսամփոփի պես աղջիկը»,որը հոգու երկնային մարմնավորումն է։Բանաստեղծը հոգու մաքրագործման ճանապարհով ուզում է փրկել երազի պես ցնդող թոքախտավոր աղջկան։Բանաստեղծը նրան անվանում է թոքախտավոր,քանի որ ի սկզբանե զգում էր,որ երկնային սերը դատապարտված է մահվան։

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,որ չմեռնի իմ հոգին,

Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում։

Ես ի՞նչ անեմ,որ մնա ծիածանը երեք գույն,

Որ չցնդի՜,չմարի՜ իմ հոգու հեռուն…

Բանաստեղծը Կապույտ Լաբիրինթոսում կարոտում է երկրային կրքերը։Երկնային երազները և երկրային ցանկությունները բախվում են հերոսի հոգում,բայց նա գնում է ինքնահաշտեցման,քանզի երկնային երազները ծնվում են երկրային ցանկություններից։Նա սիրո ճանապարհը անցնում է մարմնի և հոգու հաշտեցմամբ, որը խորհրդանշվում է ոսկով։Մարմնական ցանկությունները ավելի զորեղ էին և մոռացության մատնեցին երկնային երազանքները։Երկնային սերը,առանց բուռն կրքերի,հավասարազոր է մահվան։Նա հրաժեշտ է տալիս կապույտ երազանքին և նետվում երկրային բուռն կրքերի գիրկը։Հերոսը այս ամենին մասնակից է դարձնում երազային Կապույտ քրոջը։Նրանք նետվում են բերրի արտերի հեշտության գիրկը։

Ով հոսում էր ոսկեծուփ կապույտից դեպի վար՝

Արտերի գիրկը բերրի՝ մի հեշտությամբ հրավառ։

Սա նսեմացնում է կապույտ երազանքը։Հոգու և մարմնի մերձեցման բոցավառ կրակը մոխրացնում է կապույտ երազանքը,որից ծնվում է մանուշակագույնը։

Կապույտը վառվեց,խանձվեց ոսկում,

Արևը – անցավ։

Արևը – անհուն ու բորբ կապույտում

Բռնկված մի ցավ։

Թվում է՝հերոսը պետք է երջանիկ լինի արևի բորբ,հրավառ ոսկում։Բայց վերադարձ իրականություն նրան երջանկություն չի բերում։Հոգու և մարմնի մերձեցմանը հաջորդում է ձանձրույթն ու հիասթափությունը,որը ներկվում է մանուշակագույնով։Հերոսը գիտակցում է,որ անցյալի փլուզումով անցումը ներկային իրեն ոչ մի շող չբերեց։Նա զգում է միայն ձանձրույթ և տաղտուկ։Նա ուզում է վերադառնալ Երազային հովիտ,բայց հետդարձի կամուրջն այրված է։։Որպես ապաշխարանք նա ուզում է վերադարձնել Կապույտ աղջկան,բայց արդեն ուշ է,և նա խոր դրամա է ապրում։Նա ողբում է կապույտ երազի կորուստը.

Եվ զանգերը կարկաչուն,

Հորիզորից հորիզոն

Տրտում կօրհնեն մեր վերջին

Հրաժեշտի երեկոն…

Հերոսը,որքան էլ ձգտի նոր երազի,նոր Կապույտ աղջկա,միևնույնն է, դատապարտված է կործանման,քանի որ բոլորի մեջ էլ նա երթագիտակցորեն փնտրում և գտնում է մարմնականը՝ոսկին,և նոր հիասթափություններ ապրում։Հերոսը գիտակցում է,որ ողբերգականը իր մեջ է.հոգին պետք է վերափոխել,որի համար էլ նա երկրայինից փրկվելու և կատարելության հասնելու համար բռնում է Հարդագողի ճանապարհը։Նա ապրում է

երկրում,բայց հոգին թափառում է աստղային ուղիներում:Սրանով նա դառնում է ողբերգական կերպար:

## Տերյանի և Չարենցի խորհրդապաշտության աղերսները

«Ամեն գրող,- ասում է Թումանյանը,- ոչ այլ ինչ է, եթե ոչ իրենից առաջ եղածների ազդեցությունների հանրագումար. մեկից շատ, մյուսից քիչ, որ ընդունում, հալում է իր ոգևորության հնոցում և ձուլում, ձևակերպում է իր ճաշակով»:

Չարենցն անցնում է Տերյանի ստեղծագործական բովով, բայց չի նույնանում նրա հետ, այլ իրականությունից հուսախաբությունն ու հուսալքությունը դրսևորման ուրույն արտահայտություն են ստանում նրա պոեզիայում:Ասպարեզում՝գրական կյանքից հեռու,բարձրանում էր Ե.Չարենցը,որին վիճակված էր նոր կրակներ վառել։«Տերյանական թեմաների մեջ անգամ նա արդեն տարբերվում էր ուսուցչից,մեծանում էր բանաստեղծության ընդգրկումը և,մանավանդ,անգամ ներքին էներգիան»[5]: Փնտրենք գաղափարական այն ընդհանուր հիմքը, որի առնչությունները յուրովի դրսևորում են գտել Տերյանի ու Չարենցի պոեզիայում: Երկուսն էլ կերտում են հասարակությունից հիասթափված և օտարված, խոր դրամա ապրող անհատին, ով իրեն միայնակ է զգում այս աշխարհում.

5.Հր.Թամրազյան.«Գրական դիմանկարներ և հոդվածներ»,Երևան,1975,էջ175

Վ. Տերյան-

Բյուր մարդոց մեջ,
Պաղ մարդոց մեջ

Որպես տրտում

Անապատում

Մենակությու՛ն,

Մենակությու՛ն…

Ե.Չարենց-

Մի գիշեր է մութ: Անձրև է գալիս,

Խավար է իջել իմ մթնած հոգում:-

Ամայությունն է հեկեկում այնտեղ

Հին, անվերադարձ երազների տեղ:

Երկար դեգերումներից հետո, իրենց տեղը չգտնելով իրականության մեջ, և՛ Տերյանը, և՛ Չարենցը փնտրում և գտնում են հրաշք հեռուն՝ Երազների հովիտը, ուր կհանգրվանեն իրենց հոգնած հոգիները և անդորր կգտնեն սեփական ձեռքով կերտած դղյակում.

Տերյան-

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,

Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
Ցընորում է կապույտ մութի աշխարհում…

Չարենց-

Հոգին չի մեռնում:Մարմինը թողած երկրային
փոսում-
Թափառում է նա տիեզերական լաբիրինթոսում:
Անցնում է բոլոր ճամփաները սուտ ու անբեր
երկրի,-

Բայց ե՞րբ կհասնի հոգիս, որպես սեգ, սրբացած
մի զոհ
Մայրամուտային Եզերքը Կապույտ,-լույս եզերքը Քո:

Մեկը՝ բյուրեղյա դղյակ, մյուսը Կապույտ եզերք է մուտք գործում՝ պեղելու աշխարհի մեղքերից հոգնած հոգու մենությունը, աշխարհի կեղծիքից ու ստից զերծ պահելու և բյուրեղացնելու գռեհիկ իրականությունից ամայացած էությունը: Երկնային եզերք նրանց մուտքը ուղեկցվում է լույս աղջկա կերպարով:

Տերյան-

Սահուն քայլերով աննշմար, որպես քնքուշ մութի թև
Մի ըստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև

Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով…

Չարենց-

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ,մարմինի՛ պես երազի
Կապու՛յտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՛ պես աղջիկ…

Ինչքան էլ հերոսները ապրեն անուրջների աշխարհում, նրանց մեկուսացումը և տխրությունը ծորում է երկրային կյանքի կարոտից՝ խորհրդանշված կնոջ նկատմամբ կատարյալ սիրով.

Տերյան-

Քեզ իմ կարոտի կսկիծն է վառել
Երազանքներում իմ նվիրական.
Իմ քու՛յր, իմ դահի՛ճ, իմ սու՛րբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել:

Չարենց-

Աչքերիդ մեջ, հոգուս մեջ, քու՛յր իմ, կա՛ր, քու՛յր իմ, կա՛ր
Ոսկու շշուկ,ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ:

Երկուսն էլ հասկանում են, որ երազանքի դաշտում երազ են հյուսել կնոջ կերպարանքով, որ մնացել է իրականության մեջ. Սա խորացնում է միայնության զգացումը.հերոսը խոր դրամա է ապրում՝ մերձենալով

Մահվան հովտին:

Տերյան-

Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի
Սիրտըդ կըճչա, արդյոք ու՞ր ես, կա՞ս,
Հողը կըգրկես և կըհեկեկաս.-

Ո՛չ,- կարձագանքվի,- բնավ չես գտնի…

Չարենց-

Իրիկունը ու կապույտը կանչեցին, քու՛յր,-
Ճամփա ընկանք ոտաբոբիկ, երկնայի՛ն քու՛յր.-
Ու գնում ենք դեպի Հավերժը ամոքիչ,
Մահն է թեթև՜, մահն է բարի՜, անմարմին քու՜յր…
Հետ չնայե՛ս, հետ չնայե՛ս թաց աչքերով,
Դու իմ վերջի՜ն, իրիկնայի՜ն, աստղայի՜ն քու՜յր...

Եվ անվերադարձ կմնային Մահվան հովտում, եթե սերը կյանքի նկատմամբ հզոր չլիներ կարոտից. նրանք փրկություն են խնդրում երկրային կնոջից.

Տերյան-

Դու մութ խավարում ես ապրում.
Հիշի՛ր դու խավարում տանջվողին,

Քո սրտում արևներ են վառվում,

Արևի՛ր սև կյանքիս մութ ուղին:

Չարենց-

Բոլոր խոսքերն իմ հոգում- ճաճանչներ են լոկ:

Կապույտ միգում- ոսկեգույն ճաճանչներ են լոկ:

Քո աչքերից, քո դեմքից, քո լուսե երկրից

Ճառագայթված իմ հոգում- ճաճանչներ են լոկ:

Նրանք իրենց կերտած աշխարհները առանց կնոջ չեն պատկերացնում: Տերյանի Երազանքի հովիտը խաղաղ է ու անհույզ, սերը՝ աստվածային, կինը՝ եթերային: Չարենցի կերտած աշխարհը չի հանդարտվում երկրային կրքերից. փոթորկուն է, և երկուսի նպատակը մեկն է. այդ աշխարհներում պիտի մաքրագործվի մարդու հոգին: Նարեկացուց սկսած՝ սա շատերի անցնելիք ճանապարհն է: Այդ ճանապարհն անցնելիս և՛ Տերյանը, և՛ Չարենցը բախվում են մի պարզ ճշմարտության. իրենց հոգիները որբ են առանց կնոջ: Եվ երբ կնոջ առջև լայն բացում են իրենց կերտած աշխարհների դռները, երկնային սիրո և երկրային ցանկությունների մեջ սկսվում է մի անհաշտ պայքար: Հերոսները ձգտում են հաշտեցման եզրեր գտնել այդ երկուսի միջև՝ առանց խաթարելու հոգու անդորրը: Ոչ մեկն է հաղթում, ոչ էլ մյուսը՝ պարտվում. Պարտվողը ինքը՝ հերոսն է, քանզի առանց միմյանց՝ ոչինչ լիարժեք չէ: Մարմնի և հոգու հավերժական պայքարը բանաստեղծներին մղում է բազմակողմանիորեն ներկայացնելու բանական մահկանացուների մեղքերի համար տառապող Մարդուն: Սակայն երկուսն էլ ժամանակ առ ժամանակ կարողանում են հաղթահարել հոգու անձուկը և

մարմնի մահը և դուրս գալ խավարի մենության զնդանից.

Տերյան-

Եվ ահա կրկին զվարթ ու ջահել,
Դուրս ելա տխուր մենության բանտից,
Պայծառ աչքերդ ողջունուն են ինձ,
Եվ ես չեմ կարող իմ ճիչը պահել:

Չարենց-

Օ, նայիր  ու տե՛ս, նայի՛ր ու ժպտա,
Օ, նայի՛ր հեռուն,-
Վառվել է ահա մի ոսկի շղթա
Քրոջ աչքերում…
Սփրթնած, գունատ կապույտը արդեն
Չքացավ, չկա,
Ժպտուն, ոսկեփայլ վառվում են քո դեմ
Աչքերն աղջկա:

## Եզրակացություն

Համեմատության և ընդհանրացման սկզբունքով հետազոտությունը 2 գրողների ստեղծագործությունների միջև թույլ է տալիս խոր ընկալելու և պատկերացնելու նրանց ստեղծագործական ուղիների սկիզբը։

Տերյանը և Չարենցը մուտք գործեցին իրենց խորհրդապաշտական դղյակները տարբեր ուղիներով։ Եթե Տերյանը մեկուսացավ «բյուր մարդկանցից»,քանի որ մեծ ցավ էր զգում նրանց անտարբերության,ստի, կեղծիքի,բարոյական անկման համար,ապա Չարենցը հեռացավ իր իսկ կառուցած դղյակը,քանի որ գորշ միջավայրում կյանքը տաղտկալի էր իր մտքի և հոգու թռիչքի առջև։Երկու բանաստեղծների ուղիները նույնն էին,բայց ելակետերը՝ տարբեր։

Երկու բանաստեղծներն էլ երկար չեն մնում իրենց հոգևոր դղյակներում,նրանց վերադարձի նպատակները նույնն էին,բայց ճանապարհները՝տարբեր։

Մարդերգությունը և մարդասիրությունը հայ գրականության մեջ խոր արմատներ ունի.Գր. Նարեկացին որքան էլ ողբար մարդու նսեմությունը և փառաբաներ Աստծո վսեմությունը, հիանար Աստծո կատարելությամբ,միևնույնն է,նրա հոգում ամբարված էին մեծ սերը և դրանից բխող տառապանքը մարդու նկատմամբ։Եվ նա իր անձր և հոգին ծառայեցնում էր՝մարդու ես-ը կատարելության հասցնելու համար։Այս գաղափարը,անցնելով ժամանակի միջով,գալիս հասնում է մեր օրերը։Ժամանակի մեր կարևոր օղակ-ներն են Չարենցը և Տերյանը։

Երբ Տերյանը մաքրագործված վերադառնում է իրականություն՝փնտրելու և գտնելու իր սիրելիին,նրա համար խորթ են ու մեղսական կիրքն ու մարմնական տենչանքը:Չարենցը երկնային դրախտից իր հետ տանում է երկնային քրոջը՝նետվելու երկրային կրքերի օվկիանոսը:Երկնային քույրը նրա երազած եթերային սերն էր,որ զոհում է երկրային կրքերին:Հերոսը մնում է մերկ ու միայնակ երկրային կրքերի առջև.դա նշանակում է լիակատար պարտություն:Չարենցը երևակայականը ձգտում է ձուլել իրականին՝ մերձենալով իրական կնոջ մարմնին,բայց դա հանգեցնում է ողբերգության,քանի որ նա մարմինը պետք է ծառայեցներ ոգուն,որ հասներ կատարելության:Այս սխալ քայլը հոգին լցնում է խոր հիասթափությամբ,որը նրան կրկնակի դժբախտ է դարձնում:Եվ նրան օտարանում է իրականությունը:Տերյանի տառապանքը ծնվում է երազին չհասնելու գիտակցությունից,Չարենցինը՝վաղանցիկությունից:

Այս հետազոտությամբ եկանք այն եզրակացության,որ որքան էլ երկու գրողները նման են իրենց ստեղծագործություններում դրևորած զգացմունքներով,այնքան տարբեր են աշխարհընկալմամբ և հոգեբանությամբ:

Բայց նրանց գերնպատակը իրենց տաղանդով մարդուն ծառայելն է:

Օգտագործված գրականության ցանկ

1.Է.Ջրբաշյան,Հ.Մախչանյան.«Գրականագիտական բառարան»,1980,Երևան,էջ 274

2.Դ.Գասպարյան.«Հայ գրականություն,Ցնորական Տերյանը-գիրք 6-րդ»,Երևան,2017թ.,էջ 91

3.Ս.Աղաբաբյան.«Դասականներ և ժամանակակիցներ»,Երևան,1988թ.,էջ 151

4.Հր.Թամրազյան.«Գրական դիմանկարներ և հոդվածներ»,Երևան,1975թ., էջ 175